Նար-Դոս

Գարնանային առավոտ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՌԱՎՈՏ

Գարուն է պայծառ, արշալույսին դեմ.
Երկնից թագուհին յուր ճեմն է առնում,
Երկինք ու երկիր պատկեր մի վսեմ
Աչքիդ առջև ներկայացընում:

Կարծես, կրակի բոցով են պատած
Սուր գագաթները բարձր սարերի,
Որոնց լանջերում՝ հեռուն տարածված՝
Արոտ են ելել հոտեր խաշների:

Իսկ ծառերի տակ, թավ անտառներում,
Վճիտ առվակներ հայելու նման
Հոսում են հստակ, խոխոջ բարձրացնում,
Կարծես, սուրբ ողջույն գարնանը կարդան:

Այնտեղ հրաշալի ի՜նչ ալեծածան
Ծաղկանց փունջերով ծածկվել են դաշտեր.
Աջ, ձախ ու խոնարհ ծփան ու խայտան
Թեթև զեփյուռից ճկուն թերթիկներ:

Եվ սիրուն ծիծռունք խաբարբերք գարնան
Եկել են մեզ մոտ երկիրներեն,
Նախկին ու ծանոթ հարկ նվիրական
Որոնեն, գտնեն, բնիկներ շինեն:

Իսկ այն մենավոր պարտիզի միջին
Կարմիր է փռել վարդն յուր թերթիկներ.
Ուր հանգչի սոխակ սիրահար վարդին,
Եվ օդում հնչեն նորա գեղգեղներ:

Անուշ է բնություն, օր և կյանք է նոր,
Ծառ, ծաղիկ, արոտ, աշխարհ հրաշավոր.
Մարդ և անասուն ուրախ են բոլոր.
Ժամ չէ՛ տրտմելու, գարուն է այսօր:

7 սեպտեմբ. 1884.